ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 2281-Ա «09» հունիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ՀՐ.ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.1 ՇԵՆՔ Հ.127 ՀԱՍՑԵՈՒՄ «ՀՈՎՍԵՓ ԵՎ ՈՐԴԻ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 17.04.2025թ. տրված մասնագիտական եզրակացությունը, «ՇԵՄՔ» ՍՊԸ-ի կողմից 01.11.2024թ. տրված տեխնիկական դրական եզրակացությունը, հաշվի առնելով Հր.Ներսիսյան փողոց հ.1 շենք հասցեի բաժնային սեփականատերերի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեի 03.02.2022թ. հ.ԱՏ-03022022-01-0442 տեղեկանքը, Հր.Ներսիսյան փողոց հ.1 շենք հասցեի բաժնային սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները, ինքնակամ կառույցների չափերի մասին «Մարգարիտ Նիտալյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի սխեման և շինությունների բնութագիրը, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած իրավաբանական անձի՝ ի դեմս ներկայացուցչի դիմումները (14.12.2022թ. հ.Դ-120427-22, 21.03.2023թ. հ.Դ-33580-23, 23.08.2023թ. հ.Դ-103963-23, 05.10.2023թ. հ.Դ-122783-23, 05.09.2024թ. հ.Դ-112852-24, 06.11.2024 հ.Դ-141617-24, 28.11.2024թ. հ.Դ-151499-24, 11.12.2024թ. հ.Դ-157386-24).

1. Երևան, Արաբկիր, Հր.Ներսիսյան փողոց հ.1 շենք հ.127 հասցեում «Հովսեփ և Որդի» ՍՊԸ-ի կողմից (գրանցման համարը 264.040.02432 տրված 05.03.1996թ.) ինքնակամ իրականացված 45.2 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (հասարակական (անտրեսոլ)) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.12.2011թ. հ.2882416 վկայական) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 555147 (հինգ հարյուր հիսունհինգ հազար մեկ հարյուր քառասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության վարչության պետի վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ